

Մ Ա Ս Ի Ի Ի - Ա
Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ

«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում (սույն մասում այսուհետ՝ Նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1,186.3 մլրդ դրամի չափով, 2015 թվականի համար հաստատված¹ 1,191.5 մլրդ դրամից և 2014 թվականին փաստացի² ստացված 1,094.1 մլրդ դրամ համադրելի գումարների դիմաց:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի եկամուտների ծրագրավորվող կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 95.2%, իսկ պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային եկամուտների համապատասխանաբար 2.7%-ը և 2.2%-ը:

Աղյուսակ 1. ՀՀ 2014-2016թթ պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը

Եկամտատեսակը	2014թ համադրելի փաստացի		ՀՀ 2015թ պետական բյուջեով հաստատված		2016թ նախագիծ	
	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ
Ընդամենը, որից	1,094.1	x	1,191.5	x	1,186.3	x
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր ³	1,049.0	95.9%	1,138.7	95.6%	1,129.0	95.2%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	14.5	1.3%	25.6	2.2%	31.5	2.7%
3. Այլ եկամուտներ	30.6	2.8%	27.1	2.3%	25.8	2.2%

¹ Սույն մասում՝ այսուհետ և այսուհետ, որպես 2015 թվականի հաստատված գումարային ցուցանիշներ ներկայացվում են «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված մեծությունները:

² 2014-2016թթ փաստացի/ծրագրային ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի փաստացի մուտքերի կազմում ներառված չեն 2014 թվականին փաստացի ստացված 50,6 մլրդ դրամի չափով մուտքերը, այդ թվում՝

ա) «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված 13.9 մլրդ դրամը (ԱԱՀ-ի գծով՝ 0.8 մլրդ դրամ, պետական տուրքի գծով՝ 0.2 մլրդ դրամ, 2014 թվականի օգոստոսի 28-ի թիվ 914 որոշմամբ հաստատված հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով՝ 9,0 մլրդ. դրամ, ՀՀ քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագրի և նույնականացման քարտերի պետական տուրքերի գծով փաստացի ստացված 3,8 մլրդ. դրամ):

բ) ՀՀ պետական կառավարման մարմինների 2014 թվականի արտաբյուջետային հաշիվների փաստացի մուտքերը (որոնց գծով տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով ծրագրային ցուցանիշներ չեն սահմանվել, սակայն «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն փաստացի ցուցանիշները արտացոլվել են ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություններում), ընդամենը 36.8 մլրդ դրամ:

³ Սույն մասում այսուհետ և այսուհետ որպես 2015 թվականի հաստատված տոկոսային մեծություններ ներկայացվում են «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված գումարային ցուցանիշների և դրանց հաշվարկների հիմքում դրված ՀՆԱ-ի հարաբերակցությունը:

Ակնկալվում է, որ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 21.8%՝ 2015 թվականի համար հաստատված⁴ 24.5%-ի և 2014 թվականի փաստացի 22.6%-ի դիմաց:

Աղյուսակ 2. ՀՀ 2014-2016թթ պետական բյուջեների եկամուտների համեմատականը

ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿ	2014թ համադրելի փաստացի		2015թ պետական բյուջեով հաստատված ⁴		2016թ նախագիծ	
	Գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)	Գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)	Գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատմամբ (%)
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, որից	1,094.1	22.6%	1,191.5	24.5%	1,186.3	21.8%
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,049.0	21.7%	1,138.7	23.4%	1,129.0	20.7%
Պաշտոնական դրամաշնորհներ	14.5	0.3%	25.6	0.5%	31.5	0.6%
Այլ եկամուտներ	30.6	0.6%	27.1	0.6%	25.8	0.5%

2016 թվականի համար Նախագծով առաջարկվող եկամուտների կանխատեսումները ներկայացված են սույն բացատրագրի առանձին բաժիններում:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը 2016 թվականի համար ծրագրվել են 1,129.0 մլրդ դրամի չափով՝ 2015 թվականի համար հաստատված և 2014 թվականի փաստացի համադրելի մուտքերի⁵ համապատասխանաբար՝ 1,138.7 և 1,049.0 մլրդ. դրամի դիմաց:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի 2016 թվականի ծրագրային մակարդակը կազմում է ՀՆԱ-ի 20.7%-ը՝ 2015 թվականի համար ծրագրային⁶ և 2014 թվականի փաստացի համապատասխանաբար 23.4%-ի և 21.7%-ի դիմաց:

2016 թվականի հարկային եկամուտները և պետական տուրքերը ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Մասնավորապես,

⁴ Հաշվարկված է որպես «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված համապատասխան գումարային ցուցանիշի և 2015 թվականի բյուջեի հիմքում դրված ՀՆԱ-ի մեծության հարաբերություն:

⁵ 2014-2016թթ փաստացի/ծրագրային ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով 2014 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում ներառված չեն սույն մասի 2-րդ տողատակում նշված՝ ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված հարկային եկամուտներն ու պետական տուրքերը (13.8 մլրդ դրամ), ինչպես նաև արտաբյուջետային հաշիվների հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով փաստացի մուտքերը (1,3 մլրդ դրամ):

հիմք են ընդունվել ստորև բերված աղյուսակում ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները.

Աղյուսակ 3 Առանձին մակրոտնտեսական ցուցանիշների 2014-2016թթ փաստացի/կանխատեսումային մեծությունները

Ցուցանիշներ	2014	2015	2016
	փաստ	հաստատված	կանխատեսում
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	4,843.2	4,867.5	5,442,8
ՀՆԱ-ի իրական աճ	3,5	4.1	2,2
ՀՆԱ-ի դեֆլյատոր	2,7	3,3	4,0

Ինչպես և նախորդ տարիներին, 2016 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով տարեկան ցուցանիշը ծրագրվել է ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների, տնտեսական գործոնների և վարչարարական միջոցառումների իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերի:

Նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների հիման վրա հարկային եկամուտները և պետական տուրքերը 2016 թվականի համար ծրագրվել են 1,104.9 մլրդ դրամի չափով, ներառյալ ավելացված արժեքի հարկի գծով հետ վերադարձի գումարները:

Ըստ տնտեսական գործոնների (այդ թվում՝ վարչարարական միջոցառումների) իրականացումից 2016 թվականին ակնկալվում է հավաքագրել 24.0 մլրդ. դրամ:

Աղյուսակ 4. ՀՀ 2016 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի կանխատեսումն ըստ առանձին գործոնների (մլրդ դրամներով)

Եկամտատեսակը	ընդամենը	որից՝		
		ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների	ԱԱՀ-ի վերադարձի գծով	ըստ տնտեսական գործոնների, լրացուցիչ վարչարարական միջոցառումների
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,129.0	1,075.7	29.3	24.0

1. Հարկային եկամուտներն ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների

Սույն մասի հաջորդ բաժնում ներկայացված են առանձին հարկատեսակների կանխատեսումների մեթոդաբանությունն ու համապատասխան ծրագրային ցուցանիշները, հիմնված նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների: 2016 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 1,075.7 մլրդ դրամի չափով մուտքերի գնահատականները կատարվել են համապատասխան մուտքերի գծով ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսների փաստացի և տարեկան սպասողական, նախորդ տարիների փաստացի մուտքերի, և, ինչպես արդեն վերը նշվեց, մակրոտնտեսական շրջանակում կատարված առանձին մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիման վրա: Հարկ է նշել, որ այս գործոնի ազդեցությամբ 2016 թվականի հարկային եկամուտները և պետական տուրքերը կանխատեսվել են նախորդ տարիներին կիրառված կանխատեսման մեթոդներով (հաշվարկները կատարված են այլ հավասար պայմաններում):

2. ԱԱՀ-ի վերադարձի գծով ՀՀ 2016թ պետական բյուջեի նախագծով կանխատեսվող ֆինանսավորման հաշվարկման հիմքում ընկած է 2015թ. ծրագրված հարկային եկամուտների համեմատ 2016թ. հարկային եկամուտների անվանական աճի պահպանման մոտեցումը:

3. Վարչարարական միջոցառումների իրականացումից հարկային եկամուտների ավելացման առաջնային ուղիներից է հանդիսանում պայքարը հարկերի վճարումից խուսափելու դեպքերի, ապօրինությունների և ստվերային շրջանառությունների դեմ: Այստեղ շեշտը դրվում է հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման վրա, մասնավորապես՝ կանխամտածված հարկային օրենսդրությունը խախտողների նկատմամբ խիստ հսկողության իրականացմանը, ինչպես նաև եկամուտների հավաքագրմանն ուղղված վարչարարության ժամանակակից, անաչառ և հետևողական միջոցառումների իրականացման վրա: Մաքսային գործառնությունների բնագավառում միջոցառումները ուղղված են հետբացթողումային ստուգումների ընթացակարգերի, ռիսկերի կառավարման մեթոդների և SS գործիքների կատարելագործմանը:

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ և ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԻ**

1.1. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) գծով 2016 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 423.1 մլրդ դրամի չափով:

Կանխատեսումները կատարվել են առանձին-առանձին ըստ սպառման (առանց բենզինի և դիզելառեղիքի սպառման) և ՀՀ ներմուծվող արտադրանքի համար վճարվող ԱԱՀ-ի գումարների:

Սպառումից (առանց բենզինի և դիզելառեղիքի սպառման) ԱԱՀ-ի գծով 2016 թվականի մուտքերը գնահատելու համար դիտարկվել է ազգային հաշիվների համակարգի տնօրինվող եկամտի օգտագործման հաշվի «Վերջնական սպառման ծախսեր» հոդվածի 2014 թվականի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները: Նախապես գնահատվել է հարկի փաստացի բազան⁷: Այդ նպատակով 2016 թվականի համար 5,142.0 մլրդ դրամի չափով կանխատեսված վերջնական սպառման ծախսերի ծավալը՝

1. նվազեցվել է.

1.1. ՀՆԱ-ի՝ ԱԱՀ-ով չհարկվող մասի գնահատված ծավալի չափով՝ 2,006,7 մլրդ դրամ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքն ամբողջությամբ ենթակա չեն ԱԱՀ-ով հարկման (պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և այլն) կամ ոչ լրիվ ծավալով է ենթակա ԱԱՀ-ով հարկման (գյուղատնտեսություն, շինարարություն, առևտուր, տրանսպորտ և այլն):

Աղյուսակ 5. Սպառումից (առանց բենզինի և դիզելառեղիքի սպառման) գանձվող ԱԱՀ-ի 2014-2016թթ փաստացի բազայի գնահատումը. նվազեցման ենթակա գումարները ըստ ՀՆԱ-ի ճյուղերի (մլրդ դրամ)

Ցուցանիշները	2014	2015	2016
	փաստ	սպասողական	կանխատեսում
1. Նվազեցման ենթակա գումարներ ըստ ՀՆԱ-ի ճյուղերի, որից՝	1,715.9	1,862.0	2,006.7
1.1 Արդյունաբերություն	53.4	56.9	63.0
1.2 Գյուղատնտեսություն	502.5	530.0	575.5
1.3 Շինարարություն	156.5	169.1	173.2

⁷ Այսուհետ՝ «փաստացի բազա» հասկացությունն իրենից ներկայացնում է տվյալ տարվա ՀՆԱ-ի՝ տվյալ հարկատեսակի համար գնահատված հարկունակ մասը:

1.4 Առևտուր	175.8	171.7	186.6
1.5 Տրանսպորտ և կապ	92.1	98.8	105.3
1.6 Այլ ճյուղեր	735.7	835.4	903.1

ՀՆԱ-ի առանձին ճյուղերի՝ ԱԱՀ-ով չհարկվող ծավալների 2016 թվականի գնահատականները կատարված են՝ հիմք ընդունելով 2014 թվականի համապատասխան վիճակագրական ցուցանիշները, մասնավորապես՝

ա) Արդյունաբերության ճյուղում՝ ԱՎԾ հրապարակումների համաձայն տնտեսության առանձին ճյուղերում փոքր կազմակերպությունների տվյալ ճյուղի մեջ ունեցած տեսակարար կշռի (6,8%) կիրառմամբ (աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին» ամսական զեկույց, Կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ծախսերի տարեկան ցուցանիշներն ըստ միջին և խոշոր կազմակերպությունների «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2014թ» տարեկան զեկույց)։

բ) Գյուղատնտեսության ճյուղում՝ ըստ գյուղացիական տնտեսությունների հաշվարկված՝ ընդամենը գյուղատնտեսական ճյուղում իրացված կամ օգտագործված մթերքի (100%) և ապրանքայնության հանրապետական միջին մակարդակի՝ հաշվարկված վաճառված մթերքի մասով (56.2%) կիրառմամբ (աղբյուրը՝ «Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը գյուղացիական տնտեսությունների կողմից 2014 թվականին» վիճակագրական տեղեկագիր)։

գ) Առևտրի ճյուղում՝ խանութների և առևտրի այլ օբյեկտների (շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ առևտրի կետերի) փոքր կազմակերպությունների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, կրպակների շրջանառությունների հանրագումարի՝ ընդհանուր ճյուղի մեջ ունեցած տեսակարար կշռի հաշվարկված ցուցանիշի (31.1%) կիրառմամբ (աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին» ամսական զեկույց, Կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ծախսերի տարեկան ցուցանիշներ ըստ միջին և խոշոր կազմակերպությունների «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2014թ»։

դ) Տրանսպորտի ճյուղում՝ տրանսպորտային միջոցներով (բացի էլեկտրատրանսպորտից) կատարված ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների (բացի երկաթուղային ներհանրապետական բեռնափոխադրումների) տարեկան հասույթի՝ տրանսպորտի ընդհանուր հասույթում ունեցած տեսակարար կշռի (62.0%) և կապի ոլորտի փոքր կազմակերպությունների ընդհանուր մեջ ունեցած տեսակարար կշռի հաշվարկված ցուցանիշի (8,1%) հիման վրա

(աղբյուրը՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014թ», «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2014թ»).

ե) Շինարարության ճյուղում՝ մարդասիրական օգնության և բնակչության միջոցների հաշվին, ինչպես նաև փոքր կազմակերպությունների ընդհանուրի մեջ ունեցած տեսակարար կշռի հաշվարկված ցուցանիշի (35.3%) հիման վրա (աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին» ամսական զեկույց, «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2014թ»).

զ) Այլ ճյուղերը (ֆինանսական գործունեություն, պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում, տնային տնտեսությունների վարման ծառայություններ) նվազեցվել են ամբողջ ծավալով:

1.2. մակրոկանխատեսումների համաձայն 2016 թվականի համար ծրագրված զուտ անուղղակի հարկերի գումարի չափով՝ 529.4 մլրդ դրամ:

1.3. դիզելային վառելիքի և բենզինի սպառման հաշվարկային գումարների՝ 110.0 մլրդ դրամի չափով:

2. ավելացվել են ակցիզային հարկի և մաքսատուրքի կանխատեսված մուտքերի՝ 111.9 մլրդ դրամի չափով. քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

Նշված հաշվարկներով ԱԱՀ-ի բազան (առանց դիզելային վառելիքի և բենզինի սպառման) 2016 թվականի համար գնահատվել է 2,607.8 մլրդ դրամի չափով, որի նկատմամբ կիրառելով 2015 թվականի համար գնահատված 14.8% դրույքաչափը, կանխատեսվել են սպառումից (առանց դիզելային վառելիքի և բենզինի սպառման) ԱԱՀ-ի գծով 2016 թվականի մուտքերը 386.4 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 6. Սպառումից (առանց բենզինի և դիզելավառելիքի սպառման) գանձվող ԱԱՀ-ի և 2014-2016թթ. բազայի գնահատումը (մլրդ դրամ)

Ցուցանիշները	2014	2015	2016
	փաստ	սպասողական	կանխատեսում
1. Վերջնական սպառում	4,743.0	4,931.1	5,142.0
2. Նվազեցման ենթակա գումարներ	2,395,7	2,482,6	2,646,1
2.1 Ըստ ՀՆԱ-ի ճյուղերի	1,715,9	1,862,0	2,006,7
2.2 Արտադրանքի զուտ անուղղակի հարկեր	546.2	516.4	529.4
2.3 Բենզին և դիզելավառելիք սպառում	133.5	104.2	110.0
3. Ավելացման ենթակա գումարներ	91.4	106.3	111.9
4. ԱԱՀ-ի փաստացի բազան (տող1-տող2+տող3)	2,438,7	2,554,9	2,607,8

Բենզինի ներմուծումից ԱԱՀ-ն 2016 թվականին գնահատվել է շուրջ 7,4 մլրդ. դրամ: Բենզինի ներմուծման համար ԱԱՀ-ի կանխատեսումներում հաշվի է առնվել 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունը, համաձայն որի բենզինի ներմուծման համար հարկերը վճարվում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաստատագրված վճարի փոխարեն: Հաշվարկներում հիմք է ընդունվել 2015 թվականի տվյալ հարկատեսակի գծով հավաքագրումների ամսական միտումները (հունվար-օգոստոսին հավաքագրվել է 4,3 մլրդ. դրամ), որը ճշգրտվել է վերջին տարիների տարեկան ընդհանուր եկամուտներում հունվար-օգոստոս ամիսներին հավաքագրված հարկերի կշռով (0,64%): 2016 թվականի համար տվյալ հարկատեսակի մուտքերը գնահատելիս հաշվի է առնվել 2016 թվականի համար գնահատված ներմուծման դրամային աճը:

Դիզելային վառելիքի գծով մուտքեր չեն ծրագրվել, քանի որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն դիզելային վառելիքի ներմուծումը և օտարումը ազատված է ԱԱՀ-ից:

2014 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը, որի արդյունքում ներմուծումից և ՀՀ-ում արտադրվող-իրացվող ծխախոտի արտադրանքի համար գանձվող հաստատագրված վճարների փոխարեն հարկային պարտավորությունները (այդ թվում՝ ԱԱՀ-ի գծով) հաշվարկվում են ընդհանուր սահմանված կարգով:

ՀՀ պետական բյուջեից **ԱԱՀ-ի գերավճարների վերադարձի** ֆինանսավորումից **մուտքերը** ծրագրվել է 29,3 մլրդ. դրամ⁸:

Այսպիսով, վերը նշված մեթոդով հաշվարկված ԱԱՀ-ից 2016 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերը կանխատեսվել են 423.1 մլրդ. դրամի չափով:

Աղյուսակ 7. 2016 թվականին ԱԱՀ-ից մուտքերը (մլրդ. դրամ)

Ցուցանիշները	2016
	կանխատեսում
Ընդամենը	423.1
ԱԱՀ սպառումից	386,4
ԱԱՀ-ի վերադարձից	29.3
ԱԱՀ բենզինի ներմուծումից	7,4

1.2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկի գծով 2016 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 53.2 մլրդ. դրամ:

⁸ ԱԱՀ-ի գերավճարները կվերադարձվեն ծախսերի կազմում նախատեսված գումարի հաշվին, իսկ այս գումարը գերազանցելու դեպքում՝ գործող կարգով, այն է՝ ԱԱՀ-ից ընթացիկ փաստացի մուտքերի հաշվին:

Կանխատեսումները կատարվել են առանձին ըստ ծխախոտի, բենզինի, դիզելային վառելիքի և մնացած ենթակցիզային ապրանքների համար վճարվող ակցիզային հարկի գումարների:

Ծխախոտի արտադրանքից, բենզինից, դիզելային վառելիքից բացի մնացած ենթակցիզային ապրանքների գծով 2016 թվականին վճարվելիք ակցիզային հարկի գումարները 18,6 մլրդ դրամի չափով կանխատեսվել են ներքին շրջանառությունից և ներմուծումից առանձին՝ հաշվի առնելով 2015 թվականի գնահատված տարեկան համապատասխան սպասողական մուտքերը և 2016 թվականի համար կանխատեսվող սպառման իրական և ապրանքների ներմուծման աճի տեմպերը (1.3% և 8,3%):

Աղյուսակ 8. Ծխախոտից, բենզինից, դիզելային վառելիքից բացի մնացած ենթակցիզային ապրանքների գանձվող ակցիզային հարկից մուտքերի 2016թ մուտքերի գնահատականը

Ցուցանիշները	2014	2015	2016
1. Ակցիզային հարկ ՀՀ-ում արտադրվող ապրանքներից			
1.1. Սպառման իրական աճը	1.1%	-0.1%	1.3%
1.2. Ակցիզային հարկ ներքին արտադրությունից	9,1	7,4	7,5
2. Ակցիզային հարկ ՀՀ ներմուծվող ապրանքներից			
2.1. Ապրանքների ներմուծման աճ	1.9%	-7.0%	8.3%
2.2. Ակցիզային հարկ ներմուծումից, այդ թվում ԵԱՏՄ ներմուծումից	10,8	10,3	11,1

Ակցիզային հարկից 2016 թվականի կանխատեսվող գումարի շուրջ 49%-ը (շուրջ 26.1 մլրդ դրամ) կազմում են **ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի ակցիզային հարկը:**

Բենզինի և դիզելային վառելիքի ներմուծումից ակցիզային հարկի կանխատեսումներում ինչպես և ԱԱՀ-ի դեպքում, հիմք է ընդունվել 2015 թվականի տվյալ հարկատեսակների գծով հավաքագրումների ամսական միտումները, որը ճշգրտվել է 2012-2014 թվականների հունվար-օգոստոս ամիսներին հավաքագրված հարկերի կշռով: 2016 թվականի համար տվյալ հարկատեսակների մուտքերը գնահատելիս հաշվի է առնվել 2016 թվականի համար գնահատված ներմուծման աճը: Այս հաշվարկներով բենզինի և դիզելային վառելիքի ներմուծումից ակցիզային հարկը կանխատեսվել է համապատասխանաբար 4,1 և 4,3 մլրդ դրամի չափով:

Այսպիսով, վերը նշված մեթոդով հաշվարկված ակցիզային հարկից 2016 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերը կանխատեսվել են 53,1 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 9. 2016 թվականին ակցիզային հարկից մուտքերը (մլրդ դրամ)

Ցուցանիշները	2016
	կանխատեսում
Ընդամենը ակցիզային հարկ,	53,2
ՀՀ բենզինի ներմուծումից	4,1
ՀՀ դիզելային վառելիքի ներմուծումից	4,3
Ծխախոտի արտադրանքից	26,1
Այլ ենթակցիզային ապրանքներից	18,6

1.3. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Շահութահարկի գծով 2016 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 107.4 մլրդ դրամ:

Շահութահարկի գծով բյուջետային եկամուտների կանխատեսման նպատակով դիտարկվել են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ տնտեսական գործունեության տեսակների) հոդվածի փաստացի և կանխատեսված ցուցանիշները, որոնց հիման վրա գնահատվել է շահութահարկի փաստացի բազան: Նկատենք, որ այս հոդվածը, ըստ վիճակագրական մեթոդաբանության, ներառում է ավելացված արժեքի այն մասը, որը մնում է արտադրողներին վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության և արտադրության հարկերի վճարման հետ կապված ծախսերը կատարելուց հետո (զուտ շահույթ), ինչպես նաև տնային տնտեսություններին պատկանող ձեռնարկությունների արտադրական գործունեության արդյունքում ձևավորված շահույթը (զուտ եկամուտները):

Աղյուսակ 10. Շահութահարկի փաստացի բազայի գնահատումը (մլրդ դրամ)

Ցուցանիշները	2014	2015	2016
	Փաստ	Սպասողական	Կանխատեսում
ՀՆԱ	4,843,153	5,122,000	5,442,800
Զուտ շահույթ	1,964.6	2,077.7	2,207.8
Զուտ շահույթը ՀՆԱ-ի նկատմամբ	40.6%	40.6%	40.6%
Նվազեցման ենթակա գումարները, այդ թվում՝	705.6	741.9	806.1
Գյուղատնտեսությունից	659.4	695.6	755.3
Առևտրից	34.3	33.5	37.1
Տրանսպորտից	11.8	12.8	13.6
Շահութահարկով հարկվող փաստացի բազան	1,259.0	1,335.8	1,401.8

2016 թվականի համար տնտեսության զուտ շահույթը և զուտ խառը եկամուտները կանխատեսվել են ՀՆԱ-ի (5,442,8 մլրդ դրամ) 40.56%-ի՝ 2,207.8 մլրդ դրամի չափով: Այն նվա-

զեցնելով գյուղատնտեսության (ամբողջությամբ), առևտրի և տրանսպորտի ճյուղերում ստեղծված զուտ շահույթի և զուտ խառը եկամուտների հաշվարկային ծավալների հանրագումարների չափով (806.1 մլրդ դրամ) գնահատվել է 2016 թվականի շահութահարկի հարկման բազան (1,401.8 մլրդ դրամ): Նվազեցման ենթակա գումարները հաշվարկվել են 2013 թվականին նշված ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների նկատմամբ համապատասխան զուտ շահութան հարաբերակցությունների և 2015, 2016թթ մակրոկանխատեսումների շրջանակում կանխատեսված՝ այդ ճյուղերի ավելացված արժեքների հիման վրա:

2016 թվականի գնահատված փաստացի բազայի նկատմամբ (1,401.8 մլրդ. դրամ) կիրառելով 2015 թվականի շահութահարկի գնահատված դրույքաչափը (7.7%), գնահատվել են 2016 թվականի շահութահարկից մուտքերը՝ 107,4 մլրդ. դրամ: Շահութահարկի փաստացի դրույքաչափը քննարկելիս, օրենքով նախատեսված՝ հարկվող շահույթի բազայի հաշվարկման առանձնահատկություններից բացի հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ բերված գնահատականներում որպես շահութահարկի մակրոտնտեսական հարկման բազա օգտագործված զուտ շահույթը ներառում է նաև տնային տնտեսություններին պատկանող ձեռնարկությունների արտադրական գործունեության արդյունքում ձևավորված շահույթը (զուտ եկամուտները):

1.4. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Եկամտային հարկի գծով 2016 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 336.8 մլրդ դրամ:

Եկամտային հարկից մուտքերը կանխատեսվել են աշխատավարձից և այլ աղբյուրներից ստացած եկամուտներից վճարման ենթակա եկամտային հարկի գծով առանձին:

Աշխատավարձից վճարման ենթակա եկամտային հարկը գնահատվել է ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն» (ըստ տնտեսական գործունեության տեսակների) հոդվածի (այսուհետ՝ աշխատավարձ) փաստացի 2013 թվականի ցուցանիշի հիման վրա: 2016 թվականի համար աշխատավարձը գնահատվել է ՀՆԱ-ի (5,442.8 մլրդ դրամ) 33.7%-ի՝ 1,836,8 մլրդ դրամի չափով: Այն նվազեցվել է գյուղատնտեսության ճյուղում ստեղծված աշխատավարձի՝ 152.0 մլրդ դրամի չափով (ՀՆԱ-ի 2.8%) չափով, որի արդյունքում 2016 թվականի համար եկամտային հարկի բազան աշխատավարձի գծով գնահատվել է 1,684.8 մլրդ դրամ: Հաշվարկային բազայի նկատմամբ կիրառելով 2015 թվականի համար գնահատված եկամտահարկի դրույքաչափը՝ 18.97%, գնահատվել է աշխատավարձից վճարման ենթակա եկամտային հարկը 319.6 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 11. 2016թ աշխատավարձից վճարման ենթակա եկամտային հարկի բազայի գնահատումը (մլրդ դրամ)

Ցուցանիշները	2014	2015	2016
	փաստ	սպասողական	կանխատես-

			սում
1. ՀՆԱ	4,843.2	5,122.0	5,442.8
2. Աշխատավարձ	1,634.4	1,728.5	1,836.8
Աշխատավարձը ՀՆԱ-ի նկատմամբ	33.7%	33.7%	33.7%
3. Աշխատավարձ գյուղատնտեսության ճյուղում	135.2	143.0	152.0
Աշխատավարձ գյուղատնտեսության ճյուղում/ ՀՆԱ	2.8%	2.8%	2.8%
4. Հարկման ենթակա աշխատավարձ (տող 2-տող3)	1,499.2	1,585.5	1,684.8

Եկամտի այլ աղբյուրներից վճարման ենթակա եկամտային հարկը գնահատվել է ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» հոդվածի փաստացի և կանխատեսված ցուցանիշների, ինչպես նաև ընթացիկ տարվա գնահատված դրույքաչափի հիման վրա՝ 17.2 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 12. Այլ աղբյուրներից ստացած եկամուտներից վճարման ենթակա եկամտային հարկի բազայի գնահատումը (մլրդ դրամ)

Ցուցանիշներ	2014	2015	2016
	Փաստ	Սպասողական	Կանխատեսում
Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ առանց գյուղատնտեսության	1,305.2	1,382.1	1,452.5
Եկամտային հարկի փաստացի դրույքաչափը	1.1%	1.2%	1.2%
Այլ աղբյուրներից ստացած եկամուտներից եկամտային հարկ	14.9	16.4	17.2

1.5. ՄԱՔՍԱՏՈՒՐՔ

2016 թվականի բյուջետային մուտքերը մաքսատուրքի գծով գնահատվել են 67.1 մլրդ դրամ:

Մաքսատուրքի գծով 2016թ. մուտքերը գնահատելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ 2015 թվականից պետական բյուջե մուտքագրվող մաքսատուրքերի գերակշիռ մասը ձևավորվում է ԵՏՄ անդամ պետությունների համար նախապես սահմանված մաքսատուրքերի վերաբաշխումների դրույքաչափերին համապատասխան, մասնավորապես, ԵՏՄ պայմանագրով սահմանված դրույքաչափերն են՝

Ռուսաստանի Դաշնություն	86.97%
Ղազախստան	7.25%
Բելառուս	4.65%
Հայաստանի Հանրապետություն	1.13%

2016 թվականի ՀՀ պետական բյուջեի մաքսատուրքերի գծով կանխատեսումներն իրականացնելիս դիտարկվել է ԵՏՄ անդամ երկրների համար Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից 2015 և 2016 թվականների համար նշված երկրների ներմուծման

կանխատեսվող ցուցանիշները, որոնք ճշգրտվել են մաքսատուրքերի վերաբաշխումների դրույքաչափերին համապատասխան, ինչի արդյունքում ԵՏՄ անդամ երկրների համար ճշգրտված ներմուծման աճը կազմել է 6.3%, որն էլ կիրառվել է 2015 թվականի համար մաքսատուրքերի սպասողական 63.1 մլրդ. դրամ մեծության վրա:

1.6. ԲՆԱԿԱՀԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով 2016 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 35.1 մլրդ. դրամ:

Նշված վճարների 2016 թվականի մուտքերը գնահատվել են ըստ վճարների առանձին տեսակների, հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի, ընթացիկ տարվա սպասողական մուտքերը, արդյունաբերության ճյուղի 2016 թվականին ակնկալվող աճի՝ 7.8%-ի (հարկային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) կամ ապրանքների ներմուծման աճի՝ 8,3%-ի (մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) տեմպերը:

Այս եկամտատեսակից մուտքերի գերակշիռ մասը կազմում է ռոյալթին (արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար)՝ 23,8 մլրդ. դրամ:

Այս եկամտատեսակից մուտքերի հաջորդ խոշոր խումբը մաքսային մարմինների կողմից գանձվող բնապահպանական վճարներն են, որոնք 2016 թվականի համար ծրագրվել են 7,0 մլրդ. դրամի չափով՝ 2015 թվականի սպասողական 6,5 մլրդ. դրամի նկատմամբ կիրառելով ներմուծման 8,3% աճի տեմպը:

Մնացած 4,3 մլրդ. դրամը ծրագրվել են բնապահպանական և բնօգտագործման մյուս վճարների գծով:

1.7. ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԹՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ

Արտոնագրային վճարների և շրջանառության հարկի գծով 2016 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 19,3 մլրդ. դրամ: Կանխատեսումները կատարված են ընթացիկ տարվա համապատասխան մուտքերի և անվանական ՀՆԱ-ի (շրջանառության հարկի դեպքում) և տնտեսական աճի (արտոնագրային վճարների դեպքում) համապատասխանաբար 6.3% և 2.2%-ի տեմպերը:

1.8. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարների գծով 2016 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 3.1 մլրդ. դրամի չափով: Այս դեպքում հարկ է հաշվի առնել կատարված մի շարք օրենսդրական փոփոխություններ,

որոնց համաձայն հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների մի խումբ 2012 թվականի հունվարի 1-ից, մյուս խումբը՝ 2012 թվականի ապրիլի 1-ից դադարել են հաստատագրված վճարի հարկման օբյեկտ հանդիսանալուց: Իսկ 2014 թվականի հունվարի 1-ից հաստատագրված վճարների գերակշիռ մաս կազմող ծխախոտի հարկումը ևս անցել է հարկման ընդհանուր դաշտ:

2016 թվականի մուտքերը հաշվարկվել են ըստ գործունեության առանձին տեսակների, հաշվի առնելով 2015 թվականի սպասողականը և 2016 թվականին առևտրի ոլորտում ակնկալվող տնտեսական աճի (2,2%) ցուցանիշը:

1.9. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

2016 թվականին նպատակային սոցիալական վճարների գծով բյուջետային մուտքերը ծրագրավորվել են 13,4 մլրդ. դրամ:

2014 թվականի հուլիսից պետական բյուջեի հարկային եկամուտներում ներառված նպատակային սոցիալական վճարների գծով 2016 թվականի մուտքերը գնահատվել են, հաշվի առնելով, այն հանգամանքը, որ մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը սոցիալական վճարներ վճարողներ են համարվում 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված հանրային ծառայողները, 2014թ. հուլիսի 1-ից հետո աշխատաշուկան համալրողները, ինչպես նաև համակարգին կամավոր միացածները: Հաշվարկներում օգտագործվել է վերոհիշյալ կատեգորիաների թվաքանակի և աշխատավարձերի գծով համապատասխան ցուցանիշները:

1.10. ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ հարկային եկամուտների գծով, որը ներառում է ճանապարհային վճարները, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) և օգտագործման պարտադիր վճարները, պետական բյուջե մուտքագրվող այլ հարկային եկամուտները, 2016 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 16.4 մլրդ դրամ:

Մասնավորապես ճանապարհային վճարների գծով մուտքերը կանխատեսվել են 4,0 մլրդ դրամ, ըստ հարկային և մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների: Գնահատման հիմքում ընկած է 2015 թվականի համար հաշվարկված վճարների նկատմամբ ըստ գանձող մարմնի համապատասխանաբար ՀՆԱ-ի իրական աճի և ներմուծման աճի տեմպերի կիրառման մոտեցումը:

Ռադիոհաճախականության օգտագործման մուտքերը 2016 թվականի համար գնահատվել են 5.8 մլրդ դրամի չափով՝ նկատի ունենալով Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ներկայացրած հայտը:

2016 թՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ի լրումն վերոշարադրյալին հարկ է նշել, որ ՀՀ 2016 թվականի հարկային եկամուտների մուտքերի կանխատեսման հետ հանդերձ միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումների հիման վրա կատարվել է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով 2016 թվականի հարկային ծախսերի մեծության գնահատում, որի արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 13. 2016 թվականի հարկային ծախսերի մեծության ամփոփ գնահատական,

մլն. դրամ

Հ/Հ	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1.	ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝	281,532	24.94%	5.17%
1.1.	գյուղատնտեսություն	40,389	3.58%	0.74%
1.2.	առողջապահություն	26,968	2.39%	0.50%
1.3.	կրթություն	19,837	1.76%	0.36%
1.4.	ֆինանսներ և ապահովագրություն	30,500	2.70%	0.56%
1.5.	Դիզելային վառելիք	9,967	0.88%	0.18%
1.6.	ԱԱՀ-ի շեմ	29,714	2.63%	0.55%
1.7.	այլ, այդ թվում՝ միջազգային ծրագրերի շրջանակներում ԱԱՀ-ից ազատված ծրագրեր (գործարքներ)	124,158	11.00%	2.28%
2.	Շահութահարկի գծով, այդ թվում՝	17,836	1.58%	0.33%
2.1.	գյուղատնտեսություն	1,880	0.17%	0.03%
2.2.	շահաբաժիններ	1,099	0.10%	0.02%
2.3.	ԱԱՀ-ի շեմ	14,857	1.32%	0.27%
3.	Եկամտային հարկի գծով, այդ թվում՝	82,122	7.27%	1.51%
3.1.	գյուղատնտեսություն	72,949	6.46%	1.34%
3.2.	շահաբաժիններ	9,173	0.81%	0.17%
Ընդամենը		381,490	33.79%	7.00%

Կատարված գնահատման անհրաժեշտությունը, կարևորությունը, մեթոդաբանությունը, միջազգային փորձը և ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով 2016 թվականի հարկային ծախսերի գնահատականներն ըստ

հարկատեսակների և արտոնությունների հիմնական տեսակների ներկայացված են սույն բացատրագրի N 12 հավելվածում:

1.11. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական տուրքերի գծով 2016 թվականի բյուջետային մուտքերը ծրագրվել են 30,105.4 մլն դրամի չափով՝ 2015 թվականի համար հաստատված⁹ 31,463.8 մլն դրամի և 2014 թվականին փաստացի ստացված¹⁰ 29,792.4 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքերի գծով 2015 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ դրանց նախորդ տարիների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Պետական տուրքի առանձին տեսակների («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնական խմբերի) գծով 2016 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2015 թվականի մուտքերը գնահատվել են 1,665.0 մլն դրամի չափով, որը համապատասխանաբար 42.2 մլն դրամով և 111.4 մլն դրամով գերազանցում է 2015 թվականի համար հաստատված և 2014 թվականի փաստացի ցուցանիշները:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2016 թվականի ցուցանիշը ծրագրվել է 2015 թվականի սպասողականի նկատմամբ կիրառելով 2015-2014 թվականների տարեկան աճի տեմպը (ընդ որում, 2015 թվականի սպասողական ցուցանիշը հաշվարկվել է ընթացիկ տարվա առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2014 թվականի տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռը):

⁹ Այս բաժնում որպես ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի պետական տուրքի համար հաստատված ցուցանիշներ դիտարկվել են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման N 6 հավելվածով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի պետական տուրքի գծով հաստատված ցուցանիշները:

¹⁰ Առանց ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից

ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված 240.0 մլն դրամի չափով այն եկամուտների, որոնք հաշվառվում են պետական տուրքերի կազմում:

Առանց ՀՀ քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագրի և նույնականացման քարտերի պետական տուրքերի գծով փաստացի ստացված 3,763.2 մլն դրամի:

Առանց ՀՀ կառավարության 28.08.2014թ. N914-Ն որոշմամբ ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար պետական տուրքի գծով ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման N 6 հավելվածում կատարված ավելացման՝ 5,486.2 մլն դրամի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2016 թվականի մուտքերը կանխատեսվել են 43.3 մլն դրամի չափով՝ 2015 թվականի համար հաստատված 33.5 մլն դրամի և 2014 թվականին փաստացի ստացված 48.0 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2016 թվականի ցուցանիշը ծրագրվել է 2015 թվականի սպասողական մուտքերի չափով՝ 2015թ առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2011-2013թթ տարեկան մուտքերում 1-ին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

2014թ աճը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանում հայտարարագիր չներկայացրած երկքաղաքացիություն ունեցողների նկատմամբ կիրառվող տուգանքներով, որի արդյունքում ՀՀ քաղաքացիների մի մասը հրաժարվել է ՀՀ քաղաքացիությունից, ինչպես նաև Սիրիայի մեր հայրենակիցների հոսքով:

3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2016 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,910.0 մլն դրամի չափով՝ 2015 թվականի համար հաստատված 2,182.7 մլն դրամի և 2014 թվականին փաստացի ստացված 2,061.2 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2016 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով փորձագիտական գնահատականներից, որոնցում հաշվի է առնվել այն հանգամանքը, որ 2015թ. հունվարի 1-ից գործում է ՀՀ կառավարության 11.12.2014թ. N 1376-Ն որոշումը, որով ԱՄՆ քաղաքացիների համար սահմանվել է առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ:

4. Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2016 թվականի մուտքերը կանխատեսվել են 4,051.9 մլն դրամի չափով, որը համապատասխանաբար 672.7 մլն դրամով և 323.9 մլն դրամով պակաս է 2015 թվականի համար հաստատված և 2014 թվականին փաստացի ստացված ցուցանիշներից:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 93.7 %-ը կամ 3,796.0 մլն դրամը 2016 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 4 խմբերի հաշվին՝

4.1. ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման, ինչպես նաև պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2016 թվականի մուտքերը ծրագրվել են 1,239.8 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2015 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 30.6%-ը), որը 2015 թվականի հաստատված և 2014 թվականի փաստացի ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 259.9 մլն դրամով և 274.5 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2016 թվականի մուտքերը ծրագրվել են 2015 թվականի սպասողական մուտքերի նկատմամբ կիրառելով 2.9 % աճ:

2016 թվականի սպասողական մուտքերը կանխատեսվել են 2015 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2011-2014 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

Հարկ է նշել, որ պետական տուրքի նշված տեսակի մուտքերի կանխատեսումներում հաշվի են առնվել ստորև ներկայացվող գործոնները.

ա) համաձայն «ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2006 թվականի հուլիսի 27-ի N 1400-Ն և նոյեմբերի 30-ի N 1854-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 19-ի N 343-Ն որոշման՝ 2014 թվականի օգոստոսի 6-ից միջազգային չափանիշներին համապատասխանող նոր համարանիշեր տալու գործընթացը: Հարկ է նշել, որ նոր համարանիշերը պարտադիր են միայն նոր մեքենաների համար: Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ 2015 թվականի առաջին կիսամյակում 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ մեքենաների ներմուծումը կրճատվել է 43%-ով:

բ) ճանապարհային երթևեկության կանոնների նկատմամբ արագաչափերի և դիտարկման տեսախցիկների համակարգերի ներդրմամբ վարչական իրավախախտումների կիրառման հետ կապված իրենց կողմից վարած տրանսպորտային միջոցները այլ անձի անունով հաշվառումից հանելու և իրենց անունով հաշվառելու քաղաքացիների նախաձեռնած գործընթացը (որի արդյունքում պետհամարանիշների պահանջարկը աճել էր) հիմնականում ավարտվել է:

4.2. ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2016 թվականի մուտքերը ծրագրվել են 631.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2016 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 15.6%-ը), որը 2015 թվականի հաստատված և 2014 թվականի փաստացի ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 135.3 մլն դրամով և 135.1 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2016թ մուտքերը կանխատեսվել են 2015թ սպասողականի նկատմամբ կիրառելով 2.9 տոկոս աճ: 2015թ սպասողական մուտքերը կանխատեսվել են 2015 թվականի առաջին 7 ամիսների փաստացիի նկատմամբ կիրառելով 2011-2014 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը: 2016 թվականի մուտքերի կանխատեսումներում հաշվի են առնվել 4.1-ին կետում նշված գործոնները:

4.3. լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձվող պետական տուրքեր,

որոնց գծով 2016 թվականի մուտքերը ծրագրվել են 1,062.5 մլն դրամի չափով՝ (պետական գրանցումից 2016 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 26.2 %-ը) 2015 թվականի հաստատված 1,261.3 և 2014 թվականի փաստացի ստացված 955.6 մլն դրամի դիմաց:

Հաշվարկները կատարված են ըստ 2015 թվականին պարտադիր տեխնիկական զննություն անցնելիք մեքենաների թվաքանակի (2,5 հազար ընդհանուր օգտագործման և 420 հազար ոչ ընդհանուր օգտագործման մեքենաներ) կանխատեսումների:

4.4. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2016 թվականի մուտքերը կանխատեսվել են 862.7 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2016 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 21.3 %-ը), 2015 թվականի համար հաստատված 911.5 մլն դրամի և 2014 թվականին փաստացի ստացված 884.0 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2016 թվականի մուտքերը ծրագրվել են 2012-2014 թվականների տարեկան մուտքերի միջինի չափով:

5. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2016 թվականի մուտքերը կանխատեսվել են 427.1 մլն դրամի չափով, 2015 թվականի համար հաստատված 420.4 մլն դրամի և 2014 թվականի փաստացի 433.8 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2016 թվականի մուտքերը ծրագրվել են, ելնելով փորձագիտական գնահատականներից:

6. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2016 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,751.0 մլն դրամի չափով՝ 2015 թվականի համար հաստատված 1,725.0 մլն դրամի և 2014 թվականին փաստացի ստացված 1,791.5 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2016 թվականի մուտքերը ծրագրվել են 2015 թվականի սպասողականի չափով՝ 2015թ առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2013-2014թթ տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

Պետական տուրքի այս տեսակի մուտքերի կանխատեսումներում հաշվի է առնվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքներով այդ փաստաթղթերը 2014 թվականի հունվարի 1-ից պարտադիր կիրա-

ռության մեջ դրվելու նորմը, որի արդյունքում հին նմուշի անձնագրեր այլևս չեն տրամադրվում (բացառությամբ մինչև 16 տարեկան երեխաների և 16-18 տարեկան զինծառայողների): Նախկին նմուշի անձնագրերի աստիճանաբար շրջանառությունից դուրս գալու հանգամանքով պայմանավորված անձնագրերում օտարերկրյա պետություններում վավերականության մասին նշում կատարելու անհրաժեշտությունը վերանում է՝ շրջանառությունից դուրս եկած անձնագրերի չափով պակասում է վավերականության նշումների համար կատարվելիք պետական տուրքի վճարումները: Մի շարք երկրներից օտարերկրացիների ՀՀ մուտքի համար առանց մուտքի վիզայի ռեժիմին անցումը հանգեցնում է համապատասխան չափով պետական տուրքի գումարների նվազեցման:

7. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2016 թվականի մուտքերը կանխատեսվել են 9,393.0 մլն դրամի չափով՝ 2015 թվականի համար հաստատված 9,775.3 մլն և 2014 թվականին փաստացի ստացված 8,858.8 մլն դրամի դիմաց:

Այս խմբի պետական տուրքերի 2016 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 7,071.9 մլն դրամը կամ 75.3 %-ը նախատեսվում է գանձել վիճակախաղերի, շահումներով խաղերի, ինչպես նաև քաղաքաշինության, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների, տրանսպորտի բնագավառներում, սննդամթերքի արտադրության համար տնտեսվարող սուբյեկտների կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի հաշվին:

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով կանխատեսումներն իրականացվել են՝ ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ առկա քանակական տվյալներից, 2014 թվականի փաստացի և 2015 թվականի սպասողական մուտքերից:

8. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2016 թվականի մուտքերը կանխատեսվել են 10,817.8 մլն դրամի չափով՝ 2015 թվականի համար հաստատված 10,924.5 մլն դրամի և 2014 թվականի փաստացի ստացված 10,605.6 մլն դրամի դիմաց:

Նշված պետական տուրքերից 2016 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 9,144.3 մլն դրամը (84.5%), ապահովվելու է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի հաշվին:

ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի գծով 2016 թվականի մուտքերը կանխատեսվել են 2015 թվականի սպասողական 9,053.8 մլն դրամ մուտքերի նկատմամբ կիրառելով "Զվարթնոց" օդանավակայանի կառավարչի կողմից ներկայացված Մաստեր Պլանում նախատեսված ուղևորա-

փոխադրումների տարեկան 1.0% աճը: 2015թ սպասողականը կանխատեսվել է 2015թ առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2012-2013 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2016 թվականին ակնկալվում է ստանալ 31.5 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, ՄԺԾԾ-ով նախատեսված 27.8 մլրդ դրամի դիմաց: Պաշտոնական դրամաշնորհների գծով ՄԺԾԾ-ով նախատեսված և Նախագծով առաջարկվող գումարների միջև 3.7 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է ինչպես դրամաշնորհների կազմի և ծավալի ճշգրտմամբ, այնպես էլ հաշվարկների հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի և 1 եվրոյի դրամային փոխարժեքների փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 471.33 և 506.40 դրամ, Նախագծում՝ 473.40 և 520.83 դրամ): Յուրաքանչյուր դեպքում պաշտոնական դրամաշնորհները ծրագրվում են ծրագրավորման պահին առկա համաձայնագրերի կամ դոնորների հետ ձեռքբերված նախնական հստակ համաձայնությունների հիման վրա:

Մասնավորապես, 2016 թվականին պաշտոնական դրամաշնորհների ստացում է նախատեսվում՝

Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհային (չկապակցված դրամաշնորհներ) ծրագրերից՝ 24.5 մլն եվրո կամ 12.8 մլրդ դրամ:

Նպատակային օժանդակություն պաշտոնական¹¹ դրամաշնորհային (կապակցված դրամաշնորհներ) ծրագրերից՝ 39.6 մլն ԱՄՆ դոլար կամ 18.7 մլրդ դրամ, որից՝

- Եվրոմիության աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 9.1 մլն ԱՄՆ դոլար կամ 4.3 մլրդ դրամ,

- ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում՝ 8.0 մլն ԱՄՆ դոլար կամ 3.8 մլրդ դրամ,

- ԳԴՀ զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 7.4 մլն ԱՄՆ դոլար կամ 3.5 մլրդ դրամ,

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 5.2 մլն ԱՄՆ դոլար կամ 2.4 մլրդ դրամ,

¹¹ Որոշակի ծախսային ծրագրերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ: Նպատակային պաշտոնական դրամաշնորհային ծրագրերի գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների մանրամասները ներկայացված են նախագծի N 1 հավելվածի N 15 աղյուսակում:

- Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի ծրագրի (3-րդ տրանշ) շրջանակներում՝ 2.6 մլն ԱՄՆ դոլար կամ 1.2 մլրդ դրամ,

- Դանիայի թագավորության աջակցությամբ իրականացվող գյուղական կարողությունների ստեղծում դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 1.9 մլն ԱՄՆ դոլար կամ 0.9 մլրդ դրամ,

- Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլյոզի դեմ պայքարի ուժեղացում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 4.0 մլն ԱՄՆ դոլար կամ 1.9 մլրդ դրամ,

- Այլ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 1.4 մլն ԱՄՆ դոլար կամ 0.7 մլրդ դրամ:

3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախագծով այլ եկամուտների գծով մուտքերը 2016 թվականի համար ծրագրվել են 25.8 մլրդ դրամի չափով՝ 2015 թվականի համար հաստատված¹² 27.1 մլրդ դրամի և սպասողական 33.2 մլրդ դրամի, 2014 թվականի փաստացի¹³ 30.6 մլրդ դրամի դիմաց: ՄԺԾԾ-ով այլ եկամուտների գծով 2016 թվականի համար նախատեսվել է 23.7 մլրդ դրամ:

Այլ եկամուտների գծով 2016 թվականի համար ծրագրված տարեկան մուտքերը 2015 թվականի համար հաստատված ծրագրից պակաս են 1.3 մլրդ դրամով, 2015 թվականի սպասողականից՝ 7.4 մլրդ դրամով, իսկ 2014 թվականի փաստացի ցուցանիշից՝ 4.8 մլրդ դրամով:

2015 թվականի համար հաստատված ցուցանիշի նկատմամբ 2016 թվականի ծրագրային ցուցանիշի նվազումը հիմնականում պայմանավորված է պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարներից մուտքերով, որոնք ծրագրվել են ծրագրավորման պահին առկա վարկային պայմանագրերի (համաձայնագրերի) և կատարված փաստացի վճարումների հիման վրա:

Ընդհանուր առմամբ այլ եկամուտների գծով 2016 թվականի ծրագրային ցուցանիշները 2014 թվականի փաստացի, 2015 թվականի հաստատված և սպասողական, ինչպես նաև 2016 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշների հետ համեմատելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առանձին եկամտատեսակներ ձևավորվում են արտարժույթային հիմքով, որի արդյունքում արտարժույթի փոխանակային արժեքների փոփոխությունները ևս ազդում են ստացվող համապատասխան գումարների վրա:

¹² Այս բաժնում որպես ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի այլ եկամուտների համար հաստատված ցուցանիշներ դիտարկվել են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման N 6 հավելվածով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի այլ եկամուտների գծով հաստատված ցուցանիշները:

¹³ Առանց ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի՝ սույն մասի 2-րդ տողատակում նշված արտաբյուջետային հաշիվների փաստացի մուտքերի, որոնցից 32.78 մլրդ դրամը հաշվառվում են այլ եկամուտների կազմում:

Վերը նշված երկու գործոնների ազդեցություններից բացի, 2014 թվականի փաստացի, 2015 թվականի հաստատված և սպասողական, ինչպես նաև ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշներից 2016 թվականի համար այլ եկամուտների գծով ծրագրված մուտքերի շեղման դեպքում որոշիչ է եղել նաև բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը, որոնք հիմնականում ձևավորվում են ՀՀ կենտրոնական բանկում ավանդադրվող՝ տվյալ տարվա բյուջեի կատարման ընթացքում ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցներից:

Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով 2016 թվականի մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, նախորդ տարիների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածի փաստացի մուտքերը:

Ստորև ներկայացվում են 2016 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի՝ 2015 թվականի հաստատված և սպասողական, 2014 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ համեմատականը, հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

1. Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2016 թվականի համար կանխատեսվում են շուրջ 212.3 մլն դրամ, 2015 թվականի համար հաստատված 559.1 մլն դրամի, սպասողական 630.2 մլն դրամի և 2014 թվականին փաստացի ստացված 794.3 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները վարձակալական պայմանագրերի համաձայն 2015, 2016 թվականներին վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային փաստացի մուտքերի գծով գանձապետական տվյալները:

2. Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներից, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2016 թվականին ակնկալվում են 6,144.1 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

2.1 Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը ծրագրվել են 5,576.0 մլն դրամ՝ 2015 թվականի համար հաստատված 5,000.0 մլն դրամի, սպասողական 9,300.0 մլն դրամի և 2014 թվականի փաստացի ստացված 8,365.1 մլն դրամի դիմաց: 2016 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ժամա-

նակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ կենտրոնական բանկում ավանդադնելու դիմաց ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա վճարվելիք տոկոսավճարների:

2.2 Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2016 թվականին ակնկալվում են 568.1 մլն դրամի չափով մուտքեր՝ 2015 թվականի համար հաստատված 520.4, սպասողական 520.4 մլն դրամի և 2014 թվականին փաստացի ստացված 610.5 մլն դրամի դիմաց: Շահաբաժինների գծով 2016 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի է առնվել ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն պետական մասնակցության դիմաց պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի 50%-ի չափով պետական բյուջե կատարվելիք մասհանումների սահմանումը:

3. Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2016 թվականին կանխատեսվում են 11,055.3 մլն դրամի չափով: Մասնավորապես.

3.1 ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2016 թվականին ակնկալվում է ստանալ 10,879.7 մլն դրամ, որը ծրագրվել է՝ հաշվի առնելով համապատասխան պայմանագրերով նախատեսված դրույթները: Մասնավորապես, 2016 թվականին տոկոսավճարների գծով մուտքերն ապահովվելու են ի հաշիվ «Զանգեզուր մայնինգ» ՍՊԸ-ին, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ներին, «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին, «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային և այլ կազմակերպություններին տրամադրված վարկերի դիմաց հաշվարկված տոկոսավճարների:

3.2 Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2016 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 371.0 հազ. ԱՄՆ դոլար կամ մոտ 175.6 մլն դրամ:

4. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2016 թվականի մուտքերը ծրագրվել են 2,532.8 մլն դրամի չափով՝ 2015 թվականի համար ծրագրված 2,180.6 մլն դրամի, սպասողական 3,073.0 մլն դրամի և 2014

թվականին փաստացի ստացված 2,171.2 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ համապատասխան իրավական հիմքով վարչական պատժամիջոց կիրառող պետական կառավարման մարմինների՝ հաշվի առնելով պատժամիջոցների գծով 2011-2015 թվականների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև այս բնագավառում իրականացված օրենսդրական փոփոխությունները:

5. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտների գծով 2016 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 4,935.8 մլն դրամի չափով: Եկամուտների այս խմբի մեծ մասը կազմում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2016 թվականին մատուցվելիք ծառայությունների դիմաց ստացվելիք վճարները՝ 4,304.8 մլն դրամի չափով և հայկական երկաթուղու համակարգի վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված տարեկան վճարը՝ 350.0 մլն դրամի չափով:

6. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2016 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 878.8 մլն դրամի չափով՝ ելնելով նախորդ տարիների փաստացի մուտքերի միտումներից: